

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ).

Уბრ ჟანგის. Тифლის, Редакція «Мшакъ».

 ჟანგ Tiflis, Rédaction «Mschak».

 St. I. 302 № 253.

կմբադբուծիւնը ըսց է առաւօտեան 10—2 ժամ
(, ագի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունւում է ամեն յեղուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատողին 10 կօպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաղաքական տեսութիւն.—ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ, Ռուսաց դպրոցը Պարիզում. Պէտք է
նպաստել. Նամակ Գանձակից, Նամակ Աստրա-
խանից, Լեւրդի լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ, Կ. Պոլսի լուրագրիւններից, Արտաւանի լու-
րեր.—ՀՈՒՍԱԳԻՐՆԵՐ, —ՅԱՅՏԱՐԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ,
ՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Պարսկական կեանքից:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քաղաքական այն ճառերը, որ արտասանվեցին վերջին ժամանակներս, միաբերան աշխատում են այն ընդհանուր մոտեցմանը մղել, որ պետություններին ոչ թե համար ցանկալի է խախտել Նեյթսայի խաղաղությունը և որ ավելի ջանք պետք է գործ դրվի, որ ընդհարումներ տեղի չունենան պետությունների միջև:

Առիթներ եղել են և կան անբաւականութիւններ ի համար պետութիւնների մէջ, կան հարցեր, որոնց լուծումը, ինչ տեսակ էլ նա լինի, պէտք է առաջ բերեն անալորփութիւններ այս կամ այն պետութեան համար, բայց և այնպէս պետութիւնները այնքան վախենում են պատերազմի հետեանքներէրէջ, որ աւելի լաւ են համարում որոշ զոհանքներ և զոհեր ընդունել, քան նետովէլ պատերազմի դաշտը, որ կարող է աւելի վտանգաւոր հետեանքներ ունենայ, քան եղած զոհերն են:

Սաեայն Եւրօպայն, գնահատելով խաղաղութեան արժանիքները, չէ կարող չը նկատել, որ Եւրօպայի խաղաղասիրական ջանքերը խրախուսում են ուրիշներին անպատիժ կերպով խախտել այն սկզբունքները, որոնք Ուրիշ ժամանակ արհամարհված վիրահիբ յէջ չէին լինի երբեք և չէին մոռացվի ոչ մի կերպ:

Լրագիրների հաղորդելով ուսնաց դես-
պան Լամբղորֆի ճանապարհորդութիւնը

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊԱՐՄԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Բաշտ, նոյեմբերի 21-ին

Բազուկի ինստիտյւնէն ու թուրք երիտասարդ-
ներէից իր ազգակիցներէ մէջ աչքի ընկնող գրող
Նարինան Նարինասօլը, որ յայտնի է արդէն
Ֆովկասի թուրք հասարակութեան իր մի քանի
վէպիկներով ու թատրոններէ ինքնաներով, ծրար-
գրէի է «Քանազդի և Սօնա» վերնագրով վիպա-
նման տեւողենգիօզ գրուածների մի շարք, որը
ինչպէս խոստովանվել է ինքը մի քանի ան-
գամ ինձ, պիտի լինի իր մտածութիւնների, իր
ձգտումների և իր ուսումնասիրութիւնների եզ-
րակացութիւնը և որից երկու մաս հրատա-
րակվել է արդէն Խաչէս վէպ կամ պատմածը
«Քանազդի և Սօնա» գրուածը ունի իր հերոս-
ները, որոնք բաւական կենդանի կերպով ե-
նկարված նոր կազմակերպվող թուրք բարբա-
րաշքային ոճերի և բառերով, և այդ հերոսներ
մէջ գլխաւոր դեր են կատարում երիտասարդ-
ինտելիգենտ թուրք Բահադիրը և նորատի
նոյապէս ինտելիգենտ հայ աղջիկ Սօնան։ Դրանց
իրար հանդիպել են Թիֆլիսի Ժող. գանձիղ ա-
մարանոցներից մէկում, իրար հետ մտերմաց-
նի իրանց երկրի զրուցատրութիւնների ծա-
մանակ և առիթ ունենելու են երկար խօսակցե-
լու, որովհետև ամառը իր հայրենի երկրի ամա-
րանոցներից մէկում անցկացնելու համար Մօսկ-
վայից Գովկաս եկող ուսանող Բահադիրը իբրև
ուսուցիչ հրաւիրվում է Սօնայի հօր, կողմից
իրան։ Սօնայի գիմնադարական դասերը կրկնե-
սայու համար։

Երկուսով չատ ժամանակ են ունենում դա-
դափարներ փոխանակելու, երկուստեք միմեանց

գէպի պլաճօնական երկիրները ունեցել է խաղաղասիրական նպատակ եւ ուղղված է եղել այն կէտին, որ պլաճօնական ազգերը զուր առիթներ չը տան այնպիսի ընդհա-
րումների, որոնցից պէտք է միայն փնտրվեն: Եւ պլաճօնական փոքրիկ պետութիւնները, ըմբռնելով տեսակետը, ուշադրութիւն առանձնեցնակաւ որ, զուգումներ:

Խաղաղասիրական այդ միսսիան հանգըստացնող տպաւորութիւն գործեց Եւրոպայի վրա, սակայն նոյն Եւրոպան պետք է աշխատէ, որ գնահատվեն գործնական նապաստ խաղաղասիրական այդ ձգտումներն և միջոցներ առնվին, որ վերջ չգրվի այն առիթներին, որոնք առաջ են բերում այնպիսի անբաւականութիւններ և ժգոհութիւններ, որոնց օրինակները տեսանք Բալկանեան թերակղզում և որոնք ընդունակ են սպառնալ Եւրոպայի խաղաղութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԻՍԱՑ ԴՊՐՈՑԸ ՊԱՐԻԶՈՒՄ

Յրանախդի նշանաւոր գրող Անատոլ-Լը
րուա-Բիօլէօ, Պարիզուէ հիմնուած սօցիալա-
կան գիտութիւններէ ոռւակաց զպրողի բացման
հանդէսին՝ արտասանել է մի գեղեցիկ բանա-
խօսութիւն, որի բովանդակութիւնը քաղուա-
ծօրէն առաջ ենք դնում:

Բարի գալուստ մաղթելով և ողջունելով
 ռուս երիտասարդներին և օրիորդներին, ա-
 ռանց ծագման, ցեղի և կրօնի խտրութիւն, ինչ-
 պէս վայել է Ֆրանսիացուն, զաւակին մի հայ-
 բնիկքի, որ առաջինը հռչակեց մարդու իրա-
 ւունքները և պահանջեց հաւասար ազատու-
 թիւն ամենքի հոմար, նա ասաց. «Ձեր կայս-
 րութեան ենթակա ժողովուրդներն սերունդ-
 ներին, ռուսաց ծարի հպտուակ ցեղերի ներկա-
 յացուցիչներին, որոնցից կան այստեղ ձեր
 մէջ, թող տուէք ինձ մաղթել բազի գալուստ»

գաղութնները նվարագրելու, իրանց գործունեությունը ներդրում ունենալու համար, զգալի աճ է փորձապես ապրում և զարգացում է փերմապենտի մի քանի տեսակի, որ սիրելի խոտափամփուռներն է տեղի ունենում աշակերտությունը և վարժապետի մեջև ֆայց երկուսին էլ անմիջ են, մաքուր հողիներ երկուսին էլ պարզ փութում են հոգեխն համար, նմանությունն է ինչ անասնական կրքերի մեջ, և որովհետև իբրև բոլորովին իրար հակառակ երկու ազգություններն պատկանող անհասներ երբեք չեն կարող իրար հետ կենսակցել միմյանց հետ, նրանք պլանտացիան սիրով են դրվում են միմյանց հետ ընդհանրապես միասին իրարից հեռու կամ իրար մոտ, առավել հեռավորում են նրանց յարաբերություններն կունենան իրար հետ նրանց կազմությունների միջոցով, իսկ երկրորդը զբաղվածում յաճախ իրար տեսներով և միմյանց գործունեությունները մեջ իրար օգնելով և միմյանց սեղմելով վերջում նրանք իրարից բաժանվում են, խոտափամփուռ միջոց իրար հետ թղթակցելու:

Այստեղ վերջանում է վէպի ա. մասը: Երկր-
րորդ մասում մենք հանդիպում ենք Բահադը-
րին, նա Թիֆլիսումն է իր ընկեր-ուսանողնե-
րից մէկի հետ, նա չատ է խօսում, մեծ մե-
բարենորոգումներ է պահանջում անխնայ դա-
տապալարում: Ե իր ազգայինքների ապրելու
ներկա եղանակներն ու ձևերը, անողորմա-
հարուածում է հողեքականութիւնից սկսա-
մինչև ժողովրդական մասսայի գործած կեղտո-
տութիւնները, նա մեծ, չատ մեծ բարեփոքո-
չական դեր կատարելու է ձգտում և իր մէ-
ղջում է այդպիսի ոյժ: Նարիսանովը իր հերո-
սին տանում է դիմապիսարտ թուրք օրիորդի
օճախից հարիւր հազարից դիզող և քաղաքա-
կրթվածի հովեր աւնող թուրք բուրժուա-
յիտ, պատմում է նրա բերնով հոգեքականու-
թեան վատ արարքները, ամուսնական կամ ըն-
տանեկան կեանքին վերաբերող այլ և այլ խնդ-
րները: Ե շուափում Յետոյ, որ զլիսաւոր
է, նա բոլոր այդ բաների մասին գրում է ի

Ֆրանսիա, ձեզ, որ ձեր այդ գալստեամբ իր
միասնաբ ժող, ֆրանսիացիներեա հետ եթէ
այստեղ գտնվին երիտասարդներ, ջահիլ այ-
ջիկներ, որոնց անբարեկամութիւնը և հոսում սա-
արիւն, նոյն իսկ արիւնեան արիւն, որոնք ի-
րանց ծագումով և կրթութեամբ չեն պատկա-
նում քրիստոնեայ կրօնին, միթէ այդ պատ-
ճառ իր լինել ձեզ համար հրել նրանց, մեր-
ժեք, և միթէ կը ցանկանաք արտաքին նրանց
մեր ֆրանս-ռուսական հղբայարակցութիւնից,
ի՞նչպէս ուրիշները պահանջում են արտաքին
նրանց մարդկութիւնից: Հարկաւ, ոչ, մեր
գլխիդի ղոնները բաց են բոլոր ձեր հայրենա-
ղիցներէ արաջ, առանց կրօնի և ցեղի խտրու-
թեան:

Հնադարից զբաղվող յետոյ սկսեց խօսել մի աս ու մի ուռաների, սլաշների, լեհերի, ֆինլանդացիների մասին. անցնելով ապա Կովկասին. նա ասաց. «Ռուսաց Պողի միւս ծայրում, Կովկասի հարավում, Թիբեթայում, կայ մի այլ ազգ, որին չնչեւ սպանում են իր թշնամիների ատելութիւնը և Եւրոպայի լուծթիւնը. Դրանք հայերն են, որոնցից շատերը ապահով ապրում են ծարի դայիւսնի ներքոյ: Այդ հին ազգը, գրեթէ միակ ըրիտսոնեայ ազգը Ասիայում, քանիցս վայելել է Ռուսաստանի բարեհաճութիւնը. ձեր կառավարութիւնը ունեցել է նրանց մասին մոտեցելու արժանիքը Ս. Ստեփանոսի դաշնադրով և հրաւերել է Եւրոպայի ուղադրութիւնը նրանց վրա Բերլինի դաշնագրով Կոտորածից յետոյ նա ապաստան չնորհեց իր հողի վրայ Թիբեթայի հայ վիճակականներին, բայց, այնու մամնայնիւ, մենք ֆրանսիացիներս և ուռաներս, դեռ չենք կատարել թոյլը մեր պարտաւորութիւնները, քան թիտոնեայ պետութիւնների պարտաւորութիւնները Ասիայի այդ ըրիտսոնեաների վերաբերմամբ»:

«Ուրեմն, վերջացրեց ճառախօսը իր խօսքը՝
ձեզ ամենիդ, ուու, չեխ, լեխ, սերբ, բոլգար
հայ, մակեդոնացի, մենք ուղղում ենք հաւա-
սորապէս մեր համակրութեան արտաբայտու-

գաղափարակից Սոնային, որը նոյնպես իր կողմից նրան պիտի գրէ իր ազգակիցների վատ կամ չաւ յատկութիւնների մասին:

Բաճադիրը Շահադեղեման մի Լոռն է, Գրիրոսե-
ղովեան մի Չաղիկ է. նա ոչ մի գործ չէ ա-
նում, այլ միայն խօսում է, բայց դա մի թի-
րուլթիւն չէ, նա Դօն-Քիչօստ չէ, այլ մի մարդ-
ու գործնեւ եղանակը չը գիտէ և բոլոր սըր-
տով նկատում է, որ իր խառնքերի հինման վրա
իրանից յետոյ եկողները մեծ գործեր պիտո
կատարեն Սակայն այդ թողնուք. մեր նպա-
տակը զբաղան մի երկի մասին ճշմարտատեղե-
գրել չէ, մինք ուզում ենք ծանօթացնել մե-
քնթեքողներին նոյն վէպի հերոս Բաճադիր
աշխարհապաշտացըի հետ, որպէս զի հասկանալ
լինեն պարսիկ կեանքի մանրամասնութիւններ
մասին մեր գրեւոր պատճառներու:

Բահադիրը դիտէ, որ հայերը Կովկասում ապրող տեղացի տարրերի մէջ կուլտուրապէս բոլորից բարձր են, որ նրանք այդ բարձրութեան հասել են ոչ թէ խարդախ կամ ապօրինի միջոցներով, ինչպէս այդ հաւատացնում են իստերը, այլ իրանց չարքաշ բնաւորութեան, տոկուն աշխատութեան և առաջադիմելու բուռն ձգտումների նորհիւ: Բահադիրը դիտէ և այն, որ այժմ ինչպէս անհատները, նոյնպէս և ազգերը ապրելու իրաւունք ունենալու համար պէտք է ձգտեն խաղաղ աշխատութեան, բարձր ուսման, մասսային կրթութեան. աւագակուլութիւնը, մարդասպանութիւնը, Ֆիդիքալան ոյժ այժմ տեղի են տուել խաղաղ կուլտուրային ուժ որ այս վերջինը իւրացնելու բնորոշակ է և ամեն ջանք գործ է դնում իւրացնելու, նա բոլորից շատ իրաւունք ունի ապրելու և չուկապօր, օրից օր կտառջադիմէ, կը բարգաւաճէ իր դրութիւնը: Կովկասի թուրքերը ամեն նից շատ իրանց հարեան հայերի քաղաքակրթութիւնը կարող են բմբռնել և միայն այդ քաղաքակրթութիւնը կը յարմարւի իրանց ընտանեկան, բարոյական, հասարակայնայն, նոյն տանեկան, բարոյական, հասարակայնայն, իր

Թիւնները. մենք, Ֆրանսիացիներս, երջանիկ կը լինենք, որ Պարիզը դառնայ ոռւս ուսանող եւ րիտասարդութեան հաւաքած կենտրոնը:

ՊԵՏՔ Է ՆՊԱՍՏԵԼ

Կան անհատներ, որոնք միշտ սիրում են չափանցողթիւնների մէջ ընկնել: Կան թղթակիցներ, որոնք փոխանակ փաստերն արձանագրելու, իրականողթիւնը պատկերացնելու, զօտ են տալիս իրանց երևակայողթեանը և ծայրայեղողթիւնների մէջ են ընկնում, առանց մտածելու, թէ անարդարողթիւն է այդպիսի վարմունքը, թէ չառ միաժողովների մոլորեցնել կարող է նաև:

Անա այդպիսի թշխակցներից է երեւում և
օր. Քնարիկը, Նա «Արտեմիա» ամսագրի վեր-
ջին համարում—(մայիս—յունիս)—դետեղել է
մի թշխակցութիւն, որով գալիս է աւետելու
հասարակութեանը, թէ հայ ուսանողուհիները
ոչինչ չեն սովորում Եւրօպայում, թէ նրանք
աւելորդ թիւով են կեանք մը կը վարեն» այս-
տեղ:

—«Ա՛ր, երանի ի՞հ հայ աղջիկը ընաւ Եւրոպան ճանչցած չըլլար, դրական կերպով բացականչում է նա:

Ինչհետև Որոշվեաւ ճառ ամստեղ կերթայ ասթ-
թը երեսին, Աստուծոյ ակը սրտին մէջ... և
վրա կուտայ ինչ որ ունէր ու իր վրան կը
պատուաւսէ հրօշակման չպարը, ներկը, ա-
րուեստակեալ գիւրաթեքութիւնները և ծան-
ծաղուտ մտքի սահմանադրութեան մը նկա-
թը մը մեր կողմերը կը տանի Եւրօպային
փեշը...»

Իսկապէս ցաւալի պատկեր. կորստաբեր չա-
րիք... բայց միթէ այդպէս է իրականութիւնը.
մի/իէ ճգմարտութիւն է դառ Բոլորովինն ո՛ր

Տարիների ընթացքում մենք չլիտում ենք ու
 նեցել հայ ուսանողուհիների հետ թէ Պետեր-
 բուրգում, թէ Բերլինում և թէ Շվեյցարիա-
 յում և ըզորովի՜ն հակառակ եզրակացութեանս
 ենք եկել: Տեսել ենք նրանց թէ մասնաւոր

խիստ կործանական հասկացողություններին: Գարեկ
շարունակ այդ երկու ազգերը իրար կողքի են
ապրել, միասին են ողողել նրանք իրանց ա-
րիւն-քրտինքով իրար միացած իրանց գաշտու-
նչեւն են մի և նոյն մշինոլորտը, լսել են մի
նոյն հեղեղները, խմել են մի և նոյն ջուրը:
Պատմական անցեալում նրանք բարեկամներ են
եղել, կրօնն է դրանց մէջ խորթութիւն ու-
թնաւորութիւն հղել, բայց կրօնի իշխանու-
թեան ժամանակամիջոցը վաղուց է անցել,
այժմ այլ և այլ նախապայշարուններ միայն կը
շնչանան այդ երկու հարանա ազգերի գոյու-
թեան: Վերջուպէս պ. Նարիմանովը իր հերոս
Բահադդին բերանով յայտնում է, որ երկու
հարանա ազգերի մէջ կատարեալ բարե-
կամութիւն պէտք է լինի, ահա ինչ որ կարող
է օգտակար լինել թէ այն երկրին, ուր իրանք
ապրում են, թէ այն տէրութեան, որի պաշտ-
պանութեան տակ խաղաղ ասպարէզ են գտել
առաջադիմելու, և թէ երկուսը միմեանց և
իւրաքանչիւրը ինքն իրան: Այդ բոլոր սանուց
յետոյ Բահադդին դաւանում է, որ երկուստեք
մի քանի տարովայ աշխատութիւն,— և ահա
Կովկասի թուրքերն էլ կը լինեն կուլտուրա-
պէս այնքան բարձր, որքան իրանց հարանա
հայերն են:

Ի հարկէ, կարեք չը կայ ասելու, որ պ. Նա-
րեմանովի հերոսի ճշտումները չափ օրինական
և օգտակար են իրար մօտ ապրելու վիճակին
ենթարկված երկու ազգութիւններին. համար
բայց իդէալիստ—Բահադիրը չէ մտածում, որ
դարեւոր ընթացքով իր ազգակիցները մէջ
ամբացած, արմատացած նախապաշարմունքը
կամ կ'օրոշական աններողամտութիւնը մի քանի
լաւ խօսված ձևերի շնորհիւ չեն փոխվի իս-
կոյն, մասնաւոր որ մահմեդական աշխարհը
չափազանց կ'ասկածամտութեամբ է նայում
բնօրական կուլտուրայի վրա և մահմեդական
խնդիրներնցուն իր ամենալաւագոյն ներկայ-
ցուածքով իսկ դուրսին քաղաքակրթական

տեսանելի Բաղդադի հրատարակութեամբ լոյս տեսնող Հովհաննէս Միսկիսի ժողովածոները—
Коллекція Кавказскаго Музея—վերնագրով աշխատութեան V հատորը, այն է «Հնագիտութիւնը», որ կազմել է կոմսուհի Ուլարովան, Մոսկվայի Կայսերական Հնագիտական ընկերութեան նախագահուհին Գրիքը տպւած է թիֆլիսում և ձօնված է Կովկասի նախկին ժողովրդային մեծ իշխան Միխայիլ Նիկոլայիւի-չին (1866—1882)։ Չօնման ուղերձի մէջ Բաղդադէ յիշում է, որ փոխարքան ընդարձակ երկրի կառավարութեան հոգեւոր մէջ չէր մոռնում և գիտական խնդիրների զարգացումը։ 1864 թ. փետրվարի 14-ին, նա հաստատեց բարձր թիֆլիսյի նախաձեռնութեամբ կազմած ծրագիրը՝ կովկասեան երկրների կենսա-աշխարհագրական հետազոտութեան համար։ Գրիքը զարգացրած է փոխարքայի և կոմս ու կոմսուհի Ուլարովաների գեղեցիկ պատկերներով, ինչպէս և Կովկասի հնագիտութեան վերաբերեալ նկարներով։ Մենք առանձնապէս կը խօսենք այս հետաքրքիր հրատարակութեան մասին։

«Новое Время» հաղորդում է, որ դումայի նիստերը չը յաճախող ձայնաւորների դէմ միջոցներ ձեռք առնելու հարցի վերաբերմամբ վճռված է, որ այն ձայնաւորը, որը մի տարի շարունակ չէ յաճախում դումայի նիստերը, պէտք է համարվի դուրս եկած դումայի կազմից։

Դեկտեմբերի 14-ին սենատում քննվում էր ինստիտուտի Մացիլիսկու գանգատը մասնաւոր գործերի գլխավոր վարչութեան նախկին կառավարի իշխան Շախովսկոյի դէմ, որ արգելել էր ինստիտուտի Մացիլիսկու կազմած՝ Լիտվայի քարտէզի տարածումը՝ նրա հրատարակութեանը ութ տարի յետոյ, երբ քարտէզը արդէն տարածվել էր հասարակութեան մէջ։ Քարտէզի կազմողը պահպանել էր օրէնքով պահանջված բոլոր կանոնները։ Սենատը, քննելով այս գործը և արդար ճանաչելով ինստիտուտի Մացիլիսկուն, որոշեց իրաւունք տալ նրան 1200 ռուբլու վճար պահանջել իշխան Շախովսկոյից։

Ժողովրդական լուսաւորութեան միջնադարական դիմաւոր կոմիտէն որոշել է թող տալ ժողովրդական ձրի ընթերցարանների և գրադարանների վարչութիւններին ստանալու միայն այն ամսագիրներն ու լրագիրները, որ հրատարակում են 1) ռուսաց հոգեւոր վարչութիւնը, 2) ռուսաց կառավարութիւնը, 3) մասնագիտական բովանդակութիւն ունեցող այն լրագիրները, որոնք իրանց մէջ չեն պարունակում գրական և բնական գիտական բաժիններ և յաւելումներ։ Տեղական պարբերական հրատարակութիւնների վերաբերմամբ պահանջված է նախկին կանոնը, որի զօրութեամբ իրված ընթերցարաններում և գրադարաններում կարող են ստացվել տեղական լրագիրները և ամսագիրները նրանք միայն, որոնց վերաբերմամբ համաձայնութիւն կը կայանայ չրվանի ռուսալեզուական հոգաբարձուի, տեղական նահանգապետի և ռուս թեմական առաջնորդի մէջ։

Մագդաղաբի լրագիրների սանով, Պետերբուրգէ և հասել հիւսիսային-ամերիկական «Էնկուրիա» ընկերութեան ներկայացուցիչ Էդուարդ, որ մտադրութիւն ունի առաջարկելու Պետերբուրգի դումային տալու նրան ամպերի վրա զօրեղ ընթերցարանների միջոցով յայտարարութիւններ անելու մենարտոնութիւնը։ Յիշված ընկերութիւնը նոյն տեսակ գործ կազմակերպել է Նիւ-Եօրկում և Ֆիլադելֆիայում։

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 21-ին Ղազանցեցող եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց Գրիգոր Արծրունու մահման տառնաւոր տարեդարձի առթիւ։ Հոգեհանգիստին ներկայ էին մեր թեմի առաջնորդը, քաղաքի հոգեպաշտութիւնը և բազմաթիւ յարգողներ։ Պատարագին երգում էր թեմական դպրոցի քառամասն խումբը ուսուցիչ Դեմառեանի ղեկավարութեամբ։ Գաղանկերեան եպիսկոպոսը դամբանականով և անպաճոյճ խօսքերով բացատրեց ներկայ գտնվող հասարակութեան Գրիգոր Արծրունու բուռն եռանդը, գրական արժանաւորութիւնը և գաղափարները, նոյնը բարեմաղթելով և նրա «Մշակը» շարունակողներին։

ԳԵՍԱՌՈՒԿ գեղեցիկ (Շուշու գաւառ) մեզ

գրում են. «Քեաթուկ գեղի եկեղեցին, որ շինված է մօտ 30 տարի սրանից առաջ, մինչև այս տարվայ յունվարի 30-ի երկրաշարժը խախտելով վիճակի մէջ էր գտնվում։ Վարդաց սպասվում էր որ այսօր կամ վաղը կը փլուխ երկրաշարժը բոլորովին ճեղքեց եկեղեցու պատերը, իսկ խորանները փլուխ էին վերելից։ Եկեղեցին փակվում է հոգեւոր կառավարութեան հրամանով։ Պ. Միքայել Արաբանցը, տեղեկանալով մեզից եկեղեցու փլուխում մահն, շտապեց իր վրա առնել նորոգութեան բոլոր ծախսերը, յատկաշնելով միանգամայն 3200 ռուբլի։ Եկեղեցու նորոգութիւնը սկսված է սեպտեմբեր ամսից և այժմ վերջանալու վրա է։

ՆՈՐ-ՆԱՍԻՏԻՋԵՆԻՍԻՑ մեզ գրում են. «Արդէն երկու տասնեակ տարի է, ինչ որ Նոր-Նասիս-Ղանում գոյութիւն ունի Հոփսիսիան օրիորդական դպրոցը, որ, պէտք է խոստովանել, բաւականաչափ մեծ դեր է խաղացել քաղաքի հայ չքաւոր դասակարգի իգական սեռի մէջ կրթութիւն տարածելու գործում։ Ներկայ ուսումնարանական տարվայ սկզբին այդ դպրոցում վերակացուների և ուսուցչուհու պաշտօնի համար տեղեր են բացվում, և այդ պաշտօնները ստանալու ցանկացող խնդրատու օրիորդները երեքը հարաւորում են ստանձնելու իրանց խնդրած պաշտօնները։ Այդ օրիորդները մէկին, որ այս տարի աւարտեց տեղիս իգական գիմնազիոնի ութերորդ դասարանի մաթեմատիկական բաժինը, բացի վերակացուհու պաշտօնից յանձնվեցան դպրոցի առաջին բաժնի հայ լեզուի դասերը, և զուգ, յարգելի ընթերցող, չը զարմանաք եթէ ասեմ, որ այդ նոր ուսուցչուհին հայերէն գիտէ այնչափ որ չափ տողերիս գրողը չխաբէր։ Շատերը հարցնում էին զարմանալով, թէ ինչպէս այն նոր հրաւիրված վարժուհին պիտի դասաւանդէ հայերէն լեզուն փոքրիկ աշակերտներին, քանի որ ինքը հայերէն խօսել չը գիտէ, ուր մնաց քիչ թէ շատ կանոնաւոր գրել—կարդալ։ Փորձը ցոյց տուեց, որ օրիորդը հայերէն ամենագործածական և հասարակ բառերն անգամ չը գիտէ գրել։ Նոյն-իսկ չէ կարող Նոր-Նասիսիանի բարբառում գործածվող թանկարեւելի բառերը գիտնալով հայերէն բառերից։ Չը նայելով, որ արդէն վերջանում է դպրոցական տարվայ կեսը, աշակերտութիւններից շատերը դեռ տառերը չեն ճանաչում։ «Ասա՛ք» բառն ևս կարդալ տալիս, կարդում են «կատու», «էշ» ևս ցոյց տալիս, կարդում են «պանիր»։ Այս գրածս, ընթերցող, մտաքանին բան չէ, այլ փաստ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼՍԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

—Կիւրիկի ոչ նորընտիր կաթողիկոս ամենապատիւ Տ. Սահակ արքայան կերկայ թէ Մոսկուէն ետքը պիտի կարողանայ Երուսաղէմէն մեկնել։ Նորին արքայութիւնը գրեթէ Կիւրիկի կաթողիկոսի տեղապահ Տ. Կիրակոս արքայանին, որ մինչև որ իրմէ լուր չառնէ, հրաւիրակները Ատանայէ չը մեկնին Երուսաղէմ գալու համար։

—Ս. պատրիարքը երկուսն քաղաքային ժողովին յայտնեց թէ ինչպէս ասկէ առաջ Մոսկի և Խարբերդի, այս անգամ ալ Կարնոյ մէջ բանտարկեալներ ազատ արձակուել են։ Այս առթիւ բարեմաղթութիւններ եղել են վեհափառ կայսեր թանկագին կենաց արեւշատութեան համար։

—Մեծ Տ. Բիւրանդանի մէջ.—վարժարաններու մէջէն ծեծը վերցած է... Հիւանդանոցին մէջ սկսելու համար։ Տեղեկութիւն կը տրուի մեզի, թէ սկիւտարցի վարժուհի մը որ ս. Փրկչեան հիւանդանոցին մէջ կը դարձանուի, չենք գիտեր ինչպէս, վէճի կը բռնուի հիւանդանոցի բժիկներէն մեկուն հետ, որուն հետեւեալը իշխալ բժիկը ծեծ մը կը քայէ հիւանդ վարժուհիին, և ծեծ մը... փաստը տեսական։ Ձեռք գիտեր թէ հիւանդները բուժելու նոր եղանակ մըն է այս արեւօք, և կամ թէ իշխալ բժիկը տփոքը չիտիեց... mas-sage-ին հետ։ Ամեն պարագայի մէջ դայթակղելի դէպք մըն է ասիկայ, որուն վրա հիւանդանոցի անօրէնութեան ուշադրութիւնը կը հրաւիրենք, և որուն մասին մեր առած յաւելումական տեղեկութիւնները պիտի հրատարակենք։

—Ս. Հայրապետը նամակ մը գրելով Ջոնսոնի առաջնորդ Տ. Մեքսիսեղի արքեպիսկոպոսի, կը յայտնէ թէ՛ լսելով որ իր տը-

կարութեան պատճառաւ մտադիր է հեռանալ առաջնորդական պաշտօնէն և վանք մը քաշուիլ, կը հրաւիրէ զինքը ս. Հոփսիսիանց վանքը։ Մեքսիսեղի արքայան դեռ որոշում տուած չէ։

—Գնահատելի բարերարութիւն մը.—Բարեբէն 10 դեկտ. կը գրեն. «Վերակի օրունքն է վեր գոհարարածու իգնանեան էֆ. որու բարերարութիւնները ամէնուն ծանօթ են, տասն և ութ անգը տղաքներ որդեգրեց, որոնք առջի օր հասած էին Բարեղ հազար ու մէկ զոհարարութիւններով, բողոքական վերակացու մը։ Այդ տղաքները 15-ամեան երթալու համար ամիս մը առաջ մեկնած էին թիֆլիսէն իգնանեան էֆ. ստանձնած է ատոնց հոգը (կըրթութիւն, ստանդ)։ Խիստ գնահատելի է իր այս բարերարութիւնը։ Ասոնց մէջէն անոնք որ արհեստի կամ գիտութեան և կամ ուրիշ բանի փափաք ունին, անոնց պիտի պարապեցնէ։ Վարձեց իր նոր գաւակներուն տուն մը, և սկսած է կահաւորել և պէտք եղածները հոգար։ Իգնանեան էֆէնդի, որ միմիայն ինքն իր աճանակներն տեղադրու հոգարէն եկեղեցոյ կառուած մը կը չինէ, (ինչպէս որ սխալմամբ ուրիշներու անուններն ալ գրած էիք) չեն յիշեր «Սուրբանդակի» որ թիւին մէջ, քանի մը ամիսներէ յետոյ իր գաւակները պիտի փոխադրէ իր նորալէն գործարանին մօտ, որ Բարեղէն քիչ հեռու է։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Temps» լրագրի թղթակիցը մօտ օրերու միջինում խօսակցութիւն է ունեցել սակսոնական դրամայի հերոս Ժիրօնի հետ։ Թղթակցի այն հարցին, թէ փախստականները ինչ են մտադիր անել այսուհետեւ, Ժիրօն ուղղակի պատասխանել է. «Կը պակսվեմք և հէնց որ պակսվեցինք, կուրծքովնք փրանալու, հաւանական է, Պարիզ, որովհետեւ արինքէսան շատ սիրում է Պարիզը։ Այդպէս ես կը սկսեմ ուղևորուիլ Պրինցէսսան շատ հասարակ և համեստ պահանջներ ունի։ «Ենք յոյս ունենք, չարտնական պապ Ժիրօն, որ սպառնական արքունիքը կը վճռէ պահանջել Վատիկանից, որ լուծվի ապստամբական թագաւորանիքի ամուսնութիւնը արինքէսայի հետ։ Այժմ մենք ոչ մի բանից տեղեկութիւն չունենք։ Ինչհիշեցօք Խոսիֆ քիչ ժամանակ առաջ այցելեց իր քրոջը Պրինցէսսան յայտնեց նրան իր ցանկութիւնները. էրցէրցոյցը յետ գնաց և նրանից յետոյ մենք ալ ևս ոչ մի տեղեկութիւն չուենք իրերի գրութեան մասին։ Պրինցէսսա Լուիզան միշտ մտածում է իր երեխաների մասին։

—Անգլիական լրագիրները միաբան ուրախութիւն են յայտնում այն առթիւով, որ վենեցուէական հարցում բոլոր շահագրգռված կողմերը համաձայնութիւն տուան վէճը յանձնելու Հաագայի միջնորդ հասարակին։ «Daily Mail» նկատում է. «Վերջապէս աւարտվեց վերջին ամենամեծ փոփոխական ընդհարումներից մէկը։ Այն ամենը, ինչ որ արդարացի էր մեր պահանջների մէջ վենեցուէական հարցում, կատարելապէս յեղաշրջվեց մեր անընդունակ գիպոլիտատիւնի միջոցով, երբ Անգլիան ստիպված եղաւ ոյժ գործ դնել մի փոքրիկ պետութեան դէմ։

—«Frankfurter Zeitung» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հեռագրում է դեկտեմբերի 14-ից հետեւեալը. «Բ. Դուռը անամբերութեամբ սպասում է իմանալ կոմս Լամզգորֆի տեսակցութեան հետեւանքները կոմս Գոլուսիսկու հետ, նա շատ վախենում է, որ կարող է համաձայնութիւն կայանալ, որի հետեւեալը կը լինի պետութիւնների իրական միջամտութիւնը Մակեդոնիայում։ Վերջին օրերս մակեդոնական բոլոր իշխաններում ժողտարմէրիւնի մէջ ընդունվում են քրիստոնեաները, նրանք մօտաւորապէս ամբողջ կազմի մէջ քաղաքին են կազմում Բացի դրանից շատ քրիստոնեաներ այժմ ընդունվում են և վարչական ծառայութեան մէջ։

—Ինչպէս լրագիրները հաւատացնում են, մի քանի պետութիւններ զիտաւորութիւն ունեն պիտեւու, որ միջազգային յանձնաժողով հիմնվի, որը կը վերաստուգէ ինքօրմների մոցները։

—«Петербург. Вѣд.» լրագրին գրում են Կ. Պոլսից. «Կ. Պոլսի անգլիական դեսպան Օ'Կոննոր անցեալ շաբաթ անսպասելի կերպով հրաւիրվեց պալատ ճաշի ծախց յետոյ դեսպանը երկար ունկնդրութիւն ունեցաւ սուլթանի մօտ։ Այդ շոգոքորթիչ հրաւերը գնալուց բացարձակութիւնների առարկայ դարձաւ Կ. Պոլսի զիպոմատիական չրվաններում։ Սովորաբար, անցեալ տարիները, ըստզան ամսի ընթացքում, պետութիւնների համարեալ բոլոր ներկայացուցիչները մէկը միւսի ետեւից հրաւիրվում էին պալատ ճաշի. իսկ այժմ, թէպէտ և ըստազանը վերջանալու վրա է, միմիայն անգլիական դեսպանը սթանացաւ այդ պատիւին։ Հաւատացնում են, որ սուլթանը այդ ունկնդրութեան ժամանակ խօսած էր զեւպանի հետ վերջին դէպքի մասին Կարմիր ծովի վրա, նոյնպէս և մի քանի անցեալների գործերի մասին։ Անգլիական դեսպանը օգուտ

քաղեց դէպքից և ապացուցանում էր սուլթանին, թէ սահմանաւոր է կական ընթերցաներ մոցներ գործերի գրութիւնը բարեւերու համար Մակեդոնիայում։

—Կ. Պոլսում շատ մեծ նշանակութիւն են տալիս ռուսաց արտաքին գործերի միջնադար կոմս Լամզգորֆի ճանապարհորդութեանը։ Թիւրքաց կառավարութիւնը սաստիկ անհանգիստ է այդ բանից, չը նայելով այն պարզ յայտարարութիւններին, որ ճանապարհորդութիւնը միտք մի նպատակ ունի, այն է հանգստացնել մոգերը Սերբիայում և Բոլգարիայում, որոնք յուզված են վերջին անցքերից Մակեդոնիայում։ Թիւրքիայի այդ երկու լրագրացն է այն չրվաներական յայտագիրը, որ Բ. Դուռը ուղարկեց բոլոր վալիներին Մակեդոնիայում, որի մէջ Բ. Դուռը հրաման է տալիս վերականգնել կարգը 20 օրվայ ընթացքում և ձերբակալել թիւրքերի կամ յոյների սպանութեան մէջ բոլոր մեղադրվողներին Մակեդոնիայում։ Մակալն պետութիւններին ուղղած Բ. Դրան վերջին յայտագրի համաձայն, բոլոր վալիները, բանկվող յուզմունքների դէպքում, պարտաւոր են անյապաղ հարորդել զրա մասին կառավարութեանը և սպասել սուլթանական իրադէյին, նայի քան որ և է կտրական զինուորական միջոցների ձեռք առնելը։ Վերջին ժամանակները նկատելի է, որ Բ. Դուռը սկսում է իր պաշտպանութեան տակ առնել գիտաւորապէս յոյն հպատակներին։ Դա սուլթանի կառավարութեան սովորական ձեւ է առանձնապէս յովանաւորել որ և է մի ազգութեան, երբ նա կուի է մղում միւսի դէմ։

—«L'Europeen» լրագրի մէջ կարդում ենք. «Մեղ տեղեկացնում են, որ ռուսները օֆիցերներ են ուղարկել Մոնթեթիա, բանակցելու մօնթեթի իշխանների հետ, որպէս զի կարողանան մի ուղղակի երկաթուղու գիծ անցկացնել դէպի Պէկին Պէտը և յիշենք, որ ռուսները պահանջել էին Պէկինի արքունիքից թուլութիւն կառուցանել այդ նոր երկաթուղին, բայց թուլութիւնը չէր տրվել, որովհետեւ արքունիքը վախենում էր դժգոհութիւն պատճառել Եւրոպայի միւս զաւանակից պետութիւններին։ Մոնթեթիան աշխարհի ամենաբարձր զարնակ երկրներից մէկն է. նրա ամբողջ ազգաբնակչութիւնը հասնում է 4 միլիոնի 3,377,285 քառակուսի կիլոմետր տարածութեան վրա։ Նրա ֆլորան և ֆուտանան շատ աղքատ է. իրանք մօնթեթիները այլասեռված, չափազանց ծով, անմաքուր և վերին աստիճանի շատակեր մի ցեղ են ներկայացնում։ Նրանց մէջ կայ և ստրկութիւն։

—Եւրոպական լրագիրները հաղորդում են, որ անգլիական նոր օրէնքը ռուսման մասին, որ ջնդում է School Board-ները և աստուկացնում է անգլիական եկեղեցու ազդեցութիւնը, վերջնականապէս ընդունվեց բրիտանական երկու պալատներից ևս, այսինքն պարտմանտից և լորդերի ժողովից։ Դա յաջողութեամբ ազատարար կուսակցութեան թեկոնները որքան էլ սաստիկ ընդդիմադրութիւն ցոյց տուեցին, բայց իրանց թուական տկարութեան պատճառով, ոչինչ անել չը կարողացան։ Ուսման հին օրէնքը կազմվել էր 1870-ին Գլադստօնի և ազատամիտների ձեռքով։ Յիշելու արժանի է այն խնդրագիրը, որ անգլիացի կաթոլիկ պէրերը, ինքուրդ թագաւորից ծածուկ, ներկայացրին վերջերս Անգլիա գնացած Վիկտոր II կայսրին, խնդրելով նրան ջնդել Kulturkampf-ի վերջին հետքերը և թող տալ մի քանի արտաքուստ կրօնական կարգերի մուտքը Գերմանիա։

ՄԵՍԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 դեկտեմբերի

ՍԱՐԱՏՈՎ, Վախճանվեց վրպագրող Իլիա Ալեքսանդրովի Մալովի։

ՆՈՐ-ՄԱՐԳԵԼԱՆ, Վերջին հայիւներով, Անգլիստում և նրա գաւառում ապանված են 4,500 մարդ և քանդված են 30,000 տներ, Մարգելանի գաւառում—սպանված են 250 մարդիկ և քանդված են 3,000 տներ։ Բացված են բժշկական և կերակուր մատակարարելու կէտեր 6 տեղում։ Վերաւորվածները զետեղվում են իւրտերում։ Ռուս ազգաբնակչութիւնը մասամբ հեռացել է Անգլիստում և մասամբ զեւտեղված է վազմունքներ և իւրտերում։ Չգացվում է տաք բնակարանների պակասութիւն։ Ազգաբնակչութեան ապահովութեան և կարգաւորութեան գործը ղեկավարում է նահանգապետը, որ ապրում է Անգլիստում։ Գիշերով 6 աստիճան ցուրտ է լինում։ Հաւրածները թեթեւ են, ցնցումները գիշերով շարունակվում են։

ՄԱՐՕԿԿՈ, Ապստամբած ցեղերը հնազանդվում են սուլթանին։ Խոտովութիւնը հանդարտվում է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆՔՈՒՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿԱ ՄԻԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

